ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ք. Երևան, Մամիկոնյանց 46/5

« 30 » 04 20 25 թ. N 116-Ա

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍՆԱՎՈՐ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ, ՆԱԽՔԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՎԱՐՏԸ, ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՏՃԵՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նախաքննության ընթացքում քրեական վարույթի մասնավոր մասնակիցներին իրենց մասնակցությամբ կատարված ապացուցողական և վարութային այլ գործողությունների արձանագրությունները (այդ թվում՝ դրանց հավելվածները) պատճենները ծանոթացման համար տրամադրելու դեպքում՝ նախաքննության տվյալները, օրենքով պահպանվող գաղտնիքի հրապարակումը բացառելու նպատակով և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) մինչդատական վարույթ իրականացնող ստորաբաժանումների ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց՝

քրեական վարույթի մասնավոր մասնակիցներին, նախքան մինչդատական վարույթի ավարտը, իրենց մասնակցությամբ կատարված ապացուցողական և վարութային այլ գործողությունների արձանագրության (այդ թվում՝ դրա հավելվածի) պատճենը տրամադրելու դեպքում՝ նախազգուշացնել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 483-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին՝ կազմելով համապատասխան արձանագրություն:

2. Սույն հանձնարարականի կատարման նկատմամբ հսկողության իրականացումը հանձնարարել համապատասխան ստորաբաժանումների պետերին:

3. Սույն հանձնարարականն ուղարկել Կոմիտեի նախագահի տեղակալներին, Կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին:

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ